23 ապրիլի 2009 թվականի N 441 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 878-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշման հավելվածի «4.3.13. Արտակարգ իրավիճակների կանխարգելում» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 1.3-րդ ենթակետից հանել «Տարաբնույթ տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման ժամանակակից գործուն համակարգի ձևավորում» բառերը.

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.9-րդ ենթակետով.

«

1.9. Հայաստանի Հանրապետությունում տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման համակարգի ձևավորում	Մշակված հայեցակարգ	Ընդունված հայեցակարգ	Տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման գործուն մեխանիզմներ	Հաստատված իրավական ակտեր	Ձևավորված համակարգ	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

».

3) 3.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.1. Աղետների կամ	Մշակված	Ընդունված	Հաստատված	Տուժած	Ձևավորված	Հայաստանի

պատերազմական իրավիճակի արդյունքում վնասված և ոչնչացված ենթակառուցվածքների առաջնային վերականգնողական հանրային աշխատանքների իրականացման և տուժած բնակավայրերի բնակիչներին այդ աշխատանքներում ներգրավելու համակարգի ձևավորում	հայեցակարգ	հայեցակարգ	իրավական ակտեր	բնակավայրերի բնակիչներին վերականգնողական աշխատանքներում պաշտոնապես ներգրավելու նպատակով ներդրված մեխանիզմներ	ֆինանսական ֆոնդեր՝ այդ աշխատանքների դիմաց վարձատրության համար	Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

4) ուժը կորցրած ճանաչել 3.2-րդ ենթակետը.

5) 3.4-րդ ենթակետի՝

ա. 2-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.4. Հայաստանի Հանրապետության նյութական պահուստի համակարգի զարգացում և բարեփոխում»,

բ. 3-րդ սյունյակում «ծրագիր» բառը փոխարինել «հայեցակարգ» բառով.

գ. 4-րդ սյունակում «հաստատված ծրագիր» բառերը փոխարինել «ընդունված հայեցակարգ» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. ապրիլի
Երևան